



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

29/06/2022

## ՈՐՈՇՈՒՄ N 112-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՏՈՂ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՆՔԻ ՏԱՓ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 1/21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ 0,00104ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՐԿԱԴԻ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշումով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի բ/ ենթակետով, հիևք ընդունելով Արկադի Միրզոյանի 2022թվականի հունիսի 28-ի 3102 դիմում-խնդրանքը

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գորիս համայնքի Գորիս քաղաքի Վանքի տափ թաղամասի թիվ 1/18 հասցեում Արկադի Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի սպասարկման տարածքի ընդլայնման նպատակով, ավտոտնակին կից գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում գտնվող Գորիս համայնքի Գորիս քաղաքի Վանքի տափ թաղամասի թիվ 1/21 հասցեի 0.00104հա (կադաստրային ծածկ. 09-003-0211-0083) հողատարածքը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկության միջոցով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արկադի Միրզոյանին (10,4x2887)=30050 (երեսուն հազար հիսուն) ՀՀ դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -15

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐՈՒՆՑ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ

ԱՌՈՒՄՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ՄՅԵՐ

ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳԱԼՍՅԱՆ ԱՆԻ

ԴԻԼԱՆՉՅԱՆ ՉԵՐՄԻՆԵ

ԻՎԱՆՅԱՆ ՋԱՅԿ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՋԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ

ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՅԻ

ՏՈՌՈՉՅԱՆ ԱՐՏԱԿ

ՏՈՌՈՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ



2022թ. հունիսի « 30 »  
ք. Գորիս